ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (15 – 21-ՐԴ ԴԴ.)

ԱՐՍԵՆ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Հայերը հաստատվել են այսօրվա Ռումինիայի տարածքում դեռևս 10-րդ դարում, սակայն ռումինական քաղաքների հայ համայնքների մասին հիշատակությունները հիմնականում հանդիպում են սկսած 15-րդ դարից: Հայ բնակչության թվաքանակն աստիճանաբար աճել է Հայաստանում տեղի ունեցած տարբեր աղետների հետևանքով, ինչը ստիպել է հազարավոր հայերի լքել իրենց պատմական տարածքները: Գաղթածների մի մասը հաստատվել է ռումինական երկու պատմական իշխանություններում՝ Մոլդովայում և Վալախիայում, և մեծապես ներգրավվել տնտեսական և քաղաքական ոլորտներում[1]: Երրորդ իշխանությունում՝ Տրանսիլվանիայում, որը Ռումինիայի կազմի մեջ մտավ 1918 թ., հայերը հիմնականում ներգրավված էին առևտրի ոլորտում և բավականին լայն քաղաքական ինքնավարություն ունեին իրենց կառուցած Արմենոպոլիս (ներկայիս Գեռլա) և Եղիսաբեթուպոլիս (ներկայիս Դումբրըվեն) քաղաքներում:

Ռումինիայի քաղաքական կյանքում հայերի մասին հիշատակությունները մի քանի հարյուր տարվա պատմություն ունեն: Արդեն 16-րդ դարում Մոլդովայի իշխանության քաղաքական ասպարեզում կային ազդեցիկ հայեր: Նշանավոր դիվանագետ Պետրու Վարդիկը Մոլդովայի իշխան Պետրու 4-րդ Ռարեշի (1527-1538, 1541-1546) թարգմանիչն էր և մայրաքաղաք Սուչավայի (1388-1564) ամրոցի հրամանատարը: Նրա որդին՝ Յուրաշկո Վարդիկովիչը, զբաղեցնում էր քաղաքական կարևոր պաշտոններ 16-րդ դ. երկրորդ կեսում: Վարդիկ ազգանունը, որը շատ հայտնի էր Մոլդովայում, հանդիպում է բազմաթիվ փաստաթղթերում[2]:

---

[1] Այս երկու իշխանությունները 1859 թ. միացան և կազմեցին Ռումինիա պետությունը:

[2] **Սիրունի Հ.Ջ.**, Ռումինական իշխանությունների հայերի ժամանակագրությունը, մաս 4 (1525-1550) (ռումիներեն), «Անի» ամսագիր, տարի 2, հ. 2, Բուխարեստ, ապրիլ-հունիս

Մոլդովան ունեցել է նաև հայկական ծագում ունեցող իշխաններ, որոնցից ամենահայտնին Իոան Վոդա չել Կումպլիտն է կամ Իոան Արմեանուլը (Հովհաննես Ահեղ կամ Հովհաննես Հայ, 1572-1574), որի մայրն էր հայուհի Սերպեգան (որոշ տվյալներով հայկական Սրբուհի անվան այլ տարբերակն է): Իոանը պատերազմ է վարել Օսմանյան կայսրության դեմ 1574 թ., որի պատճառը նրա՝ Օսմանյան կայսրությանը հարկ չվճարելու հանդգնությունն էր: Կողմերը մի շարք հաղթանակներ են տանում, սակայն շուտով մի խումբ ազնվականներ դավաճանում են Իոանին, որը մահապատժի է ենթարկվում[3]: 1577 թ. Իոանի եղբայր Կարապետ Իոան Պոտկովան դառնում է Մոլդովայի իշխան, սակայն գահակալում է ընդամենը երկու ամիս: 16-րդ դարի վերջի քաղաքական խառը իրադրության պայմաններում Իոանի մյուս եղբայրները՝ Ալեքսանդր Սերպեգան և Կոնստանտինը, ինչպես նաև Ալեքսանդրի որդի Պետրու Կազակը կարճ ժամանակով նույնպես դարձել են իշխաններ[4]:

Աճելով որպես համայնք և աստիճանաբար դառնալով բավականին ազդեցիկ՝ Մոլդովայի տարբեր քաղաքների հայ համայնքներն ակամա իրենց դեմ էին տրամադրում տեղացիներին: Այնուամենայնիվ, հայերի և տեղի բնակչության միջև լուրջ հակասություններ գրեթե չեն հանդիպում, փոխարենը հայերը երբեմն խնդիրներ էին ունենում Մոլդովայի իշխանների հետ՝ ստիպված լինելով դիմակայել տարբեր մարտահրավերների: Դրանցից էր, օրինակ, 1551թ. իշխան Շտեֆան Ռարեշի (1551-1552) կողմից հայերի վրա դրված՝ ուղղափառություն ընդունելու պարտադրանքը, ինչի արդյունքում մի քանի հայկական եկեղեցիներ քանդվեցին կամ վնասվեցին մոլդովական յոթ քաղաքներում: Դեպքերի ականատես հայ հոգևորական Մինաս Թոխատեցին պատմում է, որ այդ ընթացքում հայկական ընտանիքներից շատերը կամ ընդունեցին ուղղափառություն, կամ սպանվեցին[5]: Շ. Ռարեշի մահվանից հետո հայերը վերականգնեցին իրենց եկեղեցիներն ու ունեցվածքը:

1937, էջ 80-81: **Siruni H.Dj.**, Ruminakan ishkhanutyunneri hayeri zhamanakagrutyuny. mas 4 (1525-1550) (rumineren), «Ani» amsagir, tari 2, h.2, Bucharest, april-hunis 1937, ej 80-81.

[3] **Գալփագեան Հ.**, Ռումանահայ գաղութը, Երուսաղեմ, 1979, էջ 231: **Galpagean H.**, Rumanahay gaghuty, Jerusalem, 1979, ej 231.

[4] **Սիրունի Հ.Ջ.**, Անի, Հայ մշակույթի տարեգիրք (ռումիներեն), Բուխարեստ, 1941, էջ 375, 379: **Siruni H.Dj.**, Ani, Hay mshakuyti taregirq (rumineren), Bucharest, 1941, ej 375, 379.

[5] **Թոխատեցի Մ.**, Ողբ ի վերայ Օլախաց երկրի հայերուն (ռումիներեն), Բուխարեստ, 2011, էջ 37-55: **Tokhatetsi M.**, Voghb i veray Olakhats yerkri hayerun (rumineren), Bucharest, 2011, ej 37-55.

Մոլդովայի հայ համայնքները կենտրոնացած են եղել մի շարք քաղաքներում, սակայն քաղաքականապես ակտիվ հատվածը բնակվել է հիմնականում Բոտոշան, Սուչավա և Յաշ քաղաքներում: Բոտոշանի հայ բնակչությունը 1526 թ. ստացավ համայնքային ինքնավարություն, որի շնորհիվ քաղաքային խորհրդում մոլդովացիների հետ հավասարաչափ ներկայացուցչություն և հայ բնակչության համար առանձին ղեկավար ունենալու իրավունք ձեռք բերվեց[6]: Քաղաքական այս հարաբերությունը պահպանվեց մի քանի դար՝ ընդհուպ մինչև մոլդովական բնակչության շեշտակի աճը հայ բնակչության նկատմամբ: Բոտոշանի քաղաքային վարչության հայ անդամներն են եղել Քրիստիան Մանեան, Ս. Բարոն Կապրին, Սավա Սահանովիչը, Մ. Բարոնտին, Արիթոն Բուիկլիուն, Հակոբ Իվանովիչը: Բավականին հայտնի ընտանիքներ էին Գոյլավները և Միսիրները, որոնց ներկայացուցիչները զբաղեցնում էին տարբեր պաշտոններ: Մինչև Ռումինիայում կոմունիստական ռեժիմի հաստատումը Բոտոշանն ունեցել է չորս հայ քաղաքապետ՝ Գեորգե Չոլակ, Իլիե (Լուտա) Չոլակ, Քրիստիան Չոմակ, Իոան Միսիր: 1868 թ. հիմնադրված Իրավաբանների ասոցիացիան երկու հայ անդամ ուներ՝ Լուկա Գոյլավը և Իոան Անդրոնիկը, իսկ քաղաքի հայտնի դատավորներից էին Կ. Չերքեզը, Տիգրան Բուիկլիուն և Անդրեյ Մանեան[7]: Բոտոշանի հայտնի հայերից էին 1901-1902 թթ. Ռումինիայի գյուղատնտեսության, առևտրի, արդյունաբերության և կալվածքների նախարար Պաջիլ Միսիրը և Ռումինիայի խորհրդարանի փոխնախագահ Պետրե Միսիրը (1856-1929): Հատկանշական է, որ 2000-2004 թթ. Բոտոշանի քաղաքապետն էր արմատներով հայ Ֆլորին Սիմիոն Էգները:

Բավականին նշանակալի է եղել նաև Սուչավայի հայերի քաղաքական ներգրավվածությունը: Միջին դարերում քաղաքն ունեցել է երկու քաղաքապետ՝ ռումինացի և հայ, ինչը վկայում է համայնքի հզորության մասին այդ դարերում: Մինչև 18-րդ դարը քաղաքապետերից տասներկուսը հայ են եղել, իսկ 19-րդ դարում քաղաքն ունեցել է երկու հայ քաղաքապետ Պրունկուլյան ընտանիքից՝ Աբրահամ Ռիտտեր վոն Պրունկուլը (1865-1870) և Միքայել Ռիտտեր վոն Պրունկուլը (1885-1890): Հավանական է, որ նրանց հայկական

---

[6] **Էգներ Ֆ.Ս., Պոպա Վ.**, Բոտոշանի հայկական համայնքի պատմությունը (1045-2012) (ռումիներեն), Բոտոշան, Մեդիատոր, 2012, էջ 26: **Egner F.S., Popa V.**, Botosani haykakan hamaynqi patmutyuny (1045-2012) (rumineren), Botosani, Mediator, 2012, ej 26.

[7] Նույն տեղում, էջ 71-77:

ծագումը լիներ «Մանուկյան» ընտանիքից, քանի որ «պրունկ» ռումիներենից թարգմանաբար նշանակում է «մանուկ»[8]:

Մոլդովայի վերջին մայրաքաղաք Յաշում (1564-1859) նույնպես հայ համայնքն ուներ քաղաքական դերակատարություն, որը պահպանվեց ընդհուպ մինչև 19-րդ դարը: Յաշում գտնվում էին Մոլդովայի ամենահայտնի հայկական դպրոցները, որոնցից մեկը կոչվում էր Կարակաշ (հիմնադիր Խաչերես Կարակաշյանի անունով), որի շրջանավարտներից էր քաղաքական գործիչ, տնտեսագետ և գրող Գրիգորե Տրանկու-Յաշը (1874-1940): Նա զբաղեցրել է պետական նախարարի (1920), աշխատանքի և սոցիալական ապահովության (1920-1921) և կոոպերատիվների նախարարի (1926-1927) պաշտոնները: Յաշում ծնված հաջորդ հայտնի ռումինահայն է քաղաքական գործիչ, աստղագետ և Ռումինիայի ակադեմիայի անդամ Սպիրու Հարետը (1851-1912): Նա երեք տարբեր կառավարություններում զբաղեցրել է կրթության նախարարի պաշտոնը (1897-1899, 1901-1904, 1907-1910): Ս. Հարետը մեծ բարեփոխումներ է իրականացրել կրթության ոլորտում՝ հիմք դնելով Ռումինիայի ժամանակակից կրթական համակարգին: Յաշի հայ համայնքից էր ևս մեկ նախարար՝ փիլիսոփա Վասիլե Կոնտան (1845-1882), որը 1880-1881 թթ. զբաղեցրել է հանրային կրթության և կրոնի հարցերով նախարարի պաշտոնը: Հայկական ընտանիքներից հայտնի էին Բույուկլյանները, որի ներկայացուցիչներից իրավաբան, արևելագետ և բանասեր Գրիգոր Միհրդատ Բույուկլյանը (1840-1912) 1874 թ. վերաքննիչ ատյանի ընդհանուր դատախազ էր, իսկ 1894թ.՝ Ռումինիայի բարձրագույն վճռաբեկ ատյանի անդամ: 1888 թ. նա եղել է Ռումինիայի Խորհրդարանի, իսկ 1899 թ.՝ Սենատի անդամ: Գ.Մ. Բույուկլյանը նաև մեծապես աջակցել է գիտության զարգացմանը՝ Ռումինիայի ակադեմիային կտակելով հարուստ գրականություն և շուրջ մեկ միլիոն լեյ[9]:

Ռումինահայ համայնքի պատմությունը կապված է նաև Վալախիայի իշխանության հետ, որտեղ հայերը հիմնականում կենտրոնացած էին Բուխարեստ քաղաքում: Պատմական վկայությունները, սակայն, ցույց են տալիս, որ հայերն ավելի հզոր ու ազդեցիկ են եղել Մոլդովայում, քան Վալախիայում:

Վալախիայում իշխան Միրչա չել Բըտրինի (Միրչա Ծեր, 1386-1418) օրոք Իշխանության խորհրդի անդամ է եղել Ռադու ալ լոյ Սահակը (Սահակի որդի

---

[8] Հաճկատար, Ռումինահայոց միության Սուչավայի մասնաճյուղ, 2012, էջ 41: Hatchkatar, Ruminahayots miutyan Suceavayi masnatchyugh, 2012, ej 41.

[9] **Սիրունի Հ.Ջ.**, Նիկոլաե Յորգայի հետ, Անթիլիաս, 1972, էջ 126: **Siruni H.Dj.**, Nikolae Yorgayi het, Antilias, 1972, ej 126.

Ռադու), իսկ Արմեանուլ Ագոպը (Հակոբ Հայ) իշխան Միհայ Առաջինի (1418-1420) դեսպանն է եղել: Նրանց՝ բարձր պաշտոններ զբաղեցնելը վկայում է այն մասին, որ նրանք վարժ իմացել են ռումիներեն ու ներկայացրել հայ ներգաղթյալների առնվազն երկրորդ սերունդը[10]:

Հայերը մեծ դեր են ունեցել Վալախիայի արտաքին քաղաքականության մեջ նույնպես: Պետրու Գրիգորովիչը (Պետրու Հայ) եղել է իշխան Միհայ Բրավուի (Միհայ Քաջ, 1593–1601) խորհրդատուն և դեսպանը Ավստրիայում, Ռուսաստանում և Օսմանյան կայսրությունում: Բացի դիվանագիտական աշխատանքից, նա բարձր պաշտոն է զբաղեցրել բանակում և օգնել իշխանին ռազմական գործերում՝ մասնակցելով օսմանյան հրամանատար Սինան փաշայի դեմ մղված մարտերին: Պետրուն հայտնի նկարիչ էր, տիրապետում էր բազմաթիվ լեզուների, իսկ նրա կողմից գրված՝ Մ. Բրավուի օրագիրը իշխանի գործունեության վերաբերյալ հիմնական աղբյուրներից է[11]:

1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտին, որի արդյունքում Մոլդովայի արևելյան հատվածը (Բասարաբիա) միացվեց Ռուսական կայսրությանը, երկու կողմերի բանակցություններում որոշիչ դեր ունեցավ Բուլղարիայում ծնված հայազգի Մանուկ բեյ Միրզայանը (1769-1817): Բանակցությունները, որոնք տեղի էին ունենում Բուխարեստում, կողմերի անհամաձայնության պատճառով ձախողման էին մատնվել, որից հետո նրանք դիմել էին Մանուկ բեյին՝ լուծում առաջարկելու խնդրանքով: Հաշտության համաձայնագիրն ի վերջո կնքվեց 1812 թ. մայիսի 16-ին Մանուկ բեյի՝ Բուխարեստի առանձնատանը և նրա միջնորդությամբ: Սակայն տարածքներ կորցրած թուրքական կողմը դավաճանության մեջ մեղադրեց Մանուկ բեյին, որը ստիպված եղավ փախչել Տրանսիլվանիա: 1814 թ. Վիեննայում նա հանդիպում է ռուսական կայսր Ալեքսանդր Առաջինին (1801-1825) և ընդունում նրա առաջարկը՝ տեղափոխվելու Բասարաբիա մշտական բնակության: Հինչեշտ քաղաքում Մանուկ բեյը կառուցում է հայկական ճարտարապետական ոճով մի մեծ ամրոց, որը կանգուն է մինչև այսօր: Սակայն քառասունութ տարեկանում նա անսպասելիորեն վախճանվում է, և նրա մահն անավարտ է թողնում հայազգի

---

[10] **Ժամկոչյան Է.**, Բուխարեստի հայկական եկեղեցին (ռումիներեն), Բուխարեստ, 2008, էջ 15: **Zhamkochyan E.**, Bucharesti haykakan yekeghetsin (rumineren), Bucharest, 2008, ej 15.

[11] **Սիրունի Հ.Ջ.**, Հայ եկեղեցին ռումեն հողի վրա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1966, էջ 38: **Siruni H.Dj.**, Hay yekeghetsin rumen hoghi vra, Mayr Ator Surb Etchmiadzin, 1966, ej 38.

բնակիչներով սևծովյա ափամերձ քաղաք հիմնելու ծրագիրը[12]: Ռումինական և այլ ազգերի պատմության մեջ Մանուկը հիշվում է որպես բացառիկ դիվանագիտական տաղանդ ունեցող մարդ:

Ռումինիայի ամբողջ պատմության ընթացքում հայերը պաշտպանել են երկրի սահմանները ռումինացիների հետ կողք կողքի և նույնիսկ մասնակցել իշխանությունների դեմ բռնկված հեղափոխական շարժումներին: Օրինակ՝ 1821 թ. հայկական համայնքի ակտիվիստները մասնակցել են Ռումինիայի հեղափոխական առաջնորդ Տուդոր Վլադիմիրեսկուի (1780-1821) գլխավորած շարժմանը, իսկ Հայկական փողոցը 1848 թ. հեղափոխական շարժման կարևորագույն օջախներից էր: Այդ շարժմանը մասնակցած հայտնի հայերից էին ճարտարապետ Հակոբ Մելիքը Բուխարեստից, որը ռումինացի պատմաբան, լրագրող և շարժման առաջնորդներից Նիկոլաե Բալչեսկուի (1819-1852) ընկերն էր, Անդրեյ Զախարյանը և Իոն Միսիրը Ռոման քաղաքից, որոնք հետագայում ձերբակալվեցին շարժմանը մասնակցելու համար: Հեղափոխության ձախողումից հետո 28 արհեստավոր ձերբակալվեց Հայկական փողոցում[13]: Հ. Մելիքը կարողացավ փախչել Օսմանյան կայսրություն, ապա՝ Փարիզ: Վկայություն կա այն մասին, որ հեղափոխական պայքարի ընթացքում նա իր բնակարանի ձեղնահարկում է թաքցրել շարժման առաջնորդներից երկուսին՝ գրող, բանասեր և Ռումինիայի ակադեմիայի առաջին նախագահ Իոն Հելիադե-Ռադուլեսկուին (1802-1872) և գրական ու քաղաքական գործիչ Կոնստանտին Ալեքսանդրու Ռոսետտիին (1816-1885)[14]:

1918թ. պատմական Բուկովինայի մարզը Հաբսբուրգների տիրապետությունից անցավ Ռումինիային: Մարզի ազատագրման մեջ մեծ դեր ունեցավ հայազգի գեներալ Հակոբ Զատիկը, որը Կարպատյան շրջանի 8-րդ հետևակային կորպուսի հրամանատարն էր: Մի քանի ամիս անց նա դարձավ Բուկովինայի բանակի հրամանատարը, որը վերջնականապես ազատագրեց մարզի մայրաքաղաք Չեռնաուցը (Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Բուկովինայի մեծ մասն անցավ Ուկրաինային): 1918 թ. նոյեմբերի 28-ին Հ. Զատիկը մասնակցել է Փարիզյան խաղաղության բանակցությունների՝ Բուկովինային վերաբերող մասին և ստորագրել այն: Նշանավոր զորավարը Զին-

---

[12] **Գալփագեան Հ.**, նշվ. աշխ., էջ 237-238: **Galpagean H.**, nshv. ashkh., ej 237-238.

[13] **Գրիգորյան Տ.**, Հայ ազգի պատմությունն ու մշակույթը (ռումիներեն), Բուխարեստ, 1993, էջ 387: **Grigoryan T.**, Hay azgi patmutyunn u mshakuyty (rumineren), Bucharest, 1993, ej 387.

[14] **Աբրահամյան Ա.Գ.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ.Բ, Երևան,1967, էջ 132: **Abrahamyan A.G.**, Hamarot urvagits hay gaghtavayreri patmutyan, h.B, Yerevan, 1967, ej 132.

ված ուժերի բարձրագույն խորհրդի անդամ է եղել՝ պարգևատրվելով Ռումինիայի և այլ երկրների շքանշաններով և մեդալներով[15]:

Ռումինիայի խոշոր նավահանգիստ Կոնստանցայի քաղաքական ասպարեզում նույնպես հանդիպում են հայեր: Օրինակ, 1878-1928 թթ. ընթացքում քաղաքի խորհրդի 158 անդամներից 8-ը հայեր են եղել՝ Ջեբրաիլ Ֆրենկյան, Ագոպ Տոմասյան, Մ. Լուկմանյան, Մկրտիչ, Կարապետ Մարգարյան, Ա. Դամադյան, Գալուստ Անտոն և Բարսեղ Փոլադյան, իսկ 1925 թ. քաղաքապետի օգնականը եղել է Գ. Զամբակչյանը: 20-րդ դարի սկզբին մեկ այլ հայ՝ Դ. Բուրդեան, Կոնստանցա մարզի Նեգրու վոդա գյուղաքաղաքի ղեկավարն էր, իսկ Թեոդոր Զատիկը Մանգալիայի ղեկավարի տեղակալն էր[16]:

20-րդ դարում Ռումինիայի քաղաքականության մեջ հայտնի հայերից էին նաև ֆինանսների նախարար Վիրջիլ Տրայան Ն. Մաղջեարուն (1929-1930, 1933), նյարդավիրաբույժ, առողջապահության նախարար Դումիտրու Բաղդասարը (1945-1946), ինչպես նաև արդյունաբերության և մեքենաշինության նախարար Վիրջիլ Ակտերյանը (1973-1975):

Ռումինահայերին միավորող մեկ միասնական մարմին առաջին անգամ ստեղծվեց 1919 թ. ի դեմս Ռումինահայոց միության (ՌՀՄ), ինչն անհրաժեշտություն էր հայ բնակչության համար՝ հաշվի առնելով Հայոց ցեղասպանությունից փրկված տասնյակ հազարավոր հայերի հոսքը Ռումինիա: Կազմակերպության գործունեությունը դադարեցվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո իշխանության եկած կոմունիստական ռեժիմի կողմից: Հարկ է նշել, որ Ռումինիայում կոմունիստական իշխանությունը փակեց հայկական բոլոր դպրոցները, արգելվեց կատարել մասնավոր առևտրային գործունեություն, հետևաբար տարբեր քաղաքների հայ համայնքները սկսեցին թուլանալ, և բազմաթիվ հայեր լքեցին երկիրը, որի հետևանքով հայկական համայնքի ակտիվությունը երկրի քաղաքական կյանքում գրեթե մարեց:

1989 թ. հեղափոխությունից հետո վերակազմավորված Ռումինահայոց միությունը հայ համայնքը ներկայացնում է Ռումինիայի ներքաղաքական կյանքում՝ մասնակցելով խորհրդարանական բոլոր ընտրություններին և միշտ

---

[15] **Քոլանջյան Ս.**, Ռումինահայության Անին՝ Սուչավայի հայ գաղութը, Երևան, 2000, էջ 168: **Qolanjyan S.**, Ruminahayutyan Anin՝ Suceavayi hay gaghuty, Yerevan, 2000, ej 168.

[16] **Տավիտյան Ս.**, Դոբրոջայի հայերը ռումինացիների պատմության և քաղաքակրթության մեջ (ռումիներեն), Կոնստանցա, 2003, էջ 26-27: **Tavityan S.**, Dobrogeayi hayery ruminatsineri patmutyan yev qaghaqakrtutyan mej (rumineren), Constanta, 2003, ej 26-27.

ունենալով ներկայացուցիչ-պատգամավոր Ռումինիայի երկպալատ Խորհրդարանի պատգամավորական պալատում: Համայնքի կարկառուն ներկայացուցիչներից է ՌՀՄ նախագահ Վարուժան Ոսկանյանը, որը երկու տարբեր կառավարություններում զբաղեցրել է նախ էկոնոմիկայի և առևտրի, ապա՝ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարի պաշտոնը 2006-2008 թթ., իսկ 2012-2013 թթ. եղել է էկոնոմիկայի նախարարը: Վ. Ոսկանյանը 1996 թ. ի վեր սենատոր է, նախագահել է Սենատի տարբեր հանձնաժողովներում՝ մինչև այդ լինելով ՌՀՄ ներկայացուցիչ-պատգամավորը Ռումինիայի Խորհրդարանում: Վ. Ոսկանյանին Խորհրդարանի պատգամավորական պալատում 1996 թ. փոխարինեց ՌՀՄ փոխնախագահ Վարուժան Փամբուկչյանը: Նա բարձր տեխնոլոգիաների ոլորտի հայտնի մասնագետներից է և 2000-2008 թթ. նախագահել է Պատգամավորական պալատի այդ ոլորտի հանձնաժողովը, որը հենց ինքն էլ ստեղծել էր:

Հատկանշական է, որ սկսած 1992 թ.՝ ՌՀՄ ներկայացուցիչը Ազգային փոքրամասնությունների խորհրդարանական խմբի ղեկավարն է (այն ընդգրկում է 18 ազգային փոքրամասնություն, բացի հունգարացիներից, որոնք Խորհրդարանում ներկայացված են իրենց կուսակցությունով):

Այսպիսով, սկսած միջին դարերից՝ հայերը կարևոր դեր են խաղացել Ռումինիայի քաղաքական կյանքում: Այս փաստն այսօր ավելի է արժևորվում, երբ այն դիտարկվում է Ռումինիայի հայ բնակչության այսօրվա թվաքանակի համատեքստում. ըստ 2011 թ. մարդահամարի պաշտոնական տվյալների՝ երկրում բնակվում է ընդամենը 1361 հայ: Լինելով փոքրաթիվ՝ այսօր էլ Ռումինիայի՝ արմատներով հայ բազմաթիվ քաղաքացիներ ակտիվ գործունեություն են ծավալում տարբեր ոլորտներում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ռումինական իշխանությունների, ապա նաև միասնական Ռումինիայի հայ համայնքների քաղաքական ակտիվությունն ուսումնասիրված է տարբեր տեսանկյուններից՝ որոշ քաղաքներում հայկական համայնքների կողմից ինքնավարության ձեռքբերում, բազմաթիվ հայազգի քաղաքական գործիչների գործունեություն և այլն: Ներկայացվում է նաև այսօրվա հայ համայնքի քաղաքական ներգրավվածությունը Ռումինիայի քաղաքական կյանքում՝ ի դեմս Ռումինահայոց միության:

Հոդվածում օգտագործված են նյութեր գիտական գրականությունից, ինչպես նաև տարբեր տեղեկություններ՝ հավաքված հայ համայնքի անդամների հետ հեղինակի անձնական հանդիպումների ընթացքում:

Բանալի բառեր – Ռումինիա, Մոլդովա, Վալախիա, իշխանություն, հայկական համայնք, Բուխարեստ, Բոտոշան, Սուչավա, Յաշ, նախարար, Ռումինահայոց միություն:

ПОЛИТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКИХ ОБЩИН РУМЫНИИ (15-й – 21-й вв.)

АРСЕН АРЗУМАНЯН

В статье политическая активность армянских общин в румынских княжествах, а также в объединенной Румынии изучена сквозь призму нескольких аспектов - приобретение автономии армянскими общинами в разных городах, деятельность армянских политических лиц и т.д. Статья также рассматривает участие армянской общины в сегодняшней политической жизни Румынии в лице Союза армян Румынии.

В статье использованы материалы из научной литературы, а также информация, собранная во время личных встреч автора с представителями армянской общины.

Ключевые слова – Румыния, Молдавия, Валахия, княжество, армянская община, Бухарест, Ботошань, Сучава, Яш, министр, Союз армян Румынии.

THE POLITICAL ACTIVITY OF THE ARMENIAN COMMUNITIES IN ROMANIA (15th – 20th C)

ARSEN ARZUMANYAN

This article examines the political activity of the Armenian communities of Romania through various aspects: the realization of autonomy in certain Romanian towns by the Armenian communities; the activity of numerous Armenian political leaders, etc. The article also encompasses Armenian community's (Union Of Armenians of Romanian) involvement in today's political life of Romania.

In this paper use is made of scientific articles of different publications, various information gathered by Arsen Arzumanyan's personal contacts with the members of the Armenian community as well.

Key words – Romania, Moldavia, Wallachia, principality, Armenian community, Bucharest, Botosani, Suceava, Iasi, minister, Union of Armenians of Romania.